

դատելու լինենք, այն ժամանակ պիտի ոչինչ համարենք մեր Արովեանին էլ, ԻսակՓիին էլ, որնց մատուցած ծառայութիւնների մէջ զլխաւորներից մէկը, եթէ ոչ առաջինը, ժամանակի բերմունքը հասկանալն էր, վաղուայ օրը գուշակելը, օդի մէջ նոր, գաղափարական հոսանք զգալը:

Պ. Ալպօյաճեան տ. Տիւսարին «Ժայրայեղ ազատական» է համարում: Եւ սակայն մոռանում է որ նոյն իսկ ոչ ծայրայեղ ազատական գործիչն չէ կարելի մօտենալ վանական հասկացողութիւններով և պահպանողական գաղափարներով, եթէ, ի հարկէ, անաշառ լինելու խնդիր կայ մէջ տեղ:

Լ.

ՅՅ) Հ. ՀԱՄԱՉԱՍՊ ԹԵՐՃԻՄԱՆԵԱՆ. —Պատմօրիւն Հայոց. եօթներորդ սպազրութիւն. Գևիետիկ, 1901, եր. 102, 80/, բազմաթիւ պատկերներով, Գինը 1 ֆրանկ. (40 կոպէկ):

Այս գիրքը նոր աշխատութիւն չէ. առաջին անգամ լոյս է տեսել, եթէ չենք սիսալուում, 1847-ին, 50 տարուայ հնութիւն: Այսբանն էլ բաւական է՝ զրքի պակասութիւնները ցոյց տալու համար:

Մի շրջան կար մեզանում, երբ մենք շատ էինք սիրում մեր պատմութիւնը. այդ շրջանում հայերը շատ էին զրում հայոց պատմութեան. դասագրքեր, համարեա ամեն տեղ ուր հայեր կային և հայ տպարան, լոյս էին հանուում այդպիսի գասագրքեր: Հ. Թերճիմանեանի ներկայ աշխատութիւնը այդ շարժման բազմաթիւ արտայայտութիւններից մէկն է: Նա աշքի չէ ընկնում առաջին արժանաւորութիւններով. պատմութեան մի շատ չոր ու ցամաք կմակք է դա, որի վրայ չէ երեսում կենդանութեան որ և է նշոյլ: 102 երեսների վրայ, որոնց համարեա կէսը բռնուում են պատկերները, ամփոփուած է մեր ամբողջ պատմութիւնը: Հասկանալի է որ այդպիսի ծաւալում կարելի էր զետեղել միայն անցքերի լիշտատկութիւն, միայն անուններ:

Բայց թէ հեղինակը և թէ այժմեան հրատարակիչները, գրքի պակասութիւնները արդարացնելու համար, ընդգծում են մի քանի անգամ, թէ դա մի դասագիրը է երեխաների համար: Շատ լւա: Սակայն մի՞թէ դասագիրը ասելով ամեն ինչ վերջանում է. մի՞թէ դասագիրը չը պիտի ունենայ աշխարհ, կենդանութիւն, մի՞թէ դասագիրը պիտի ունենայ աշխարհ, անուններ և դէքքեր պիտի հաղորդէ: Գուցէ 1847-ին, երբ առաջին անգամ լոյս էր տես-

նում «Պատմութիւնը», այդպէս էին հասկանում մանկավարժները դասագրերի նշանակութիւնը: Բայց այն հին ժամանակները անցան, իսկ ներկան ունի իր պահանջները, իր դաւանութիւնը: Ներկայի համար դա մի անպէտք դասագրեք է:

Նախ և առաջ գրութեան ձեր: Դուք յիշում եք հին կատելսիդիսները—հարց ու պատասխանով: Այս պատմութիւնն էլ այդ ձեռվ է գրուած, ինչպէս նաև Վենետիկում լոյս տեսած դասագրերի մեծ մասը: Մեքենայական դասաւութեան մի քարազնող ձևն է դա, որ վաղուց արտաքսուած է դասագրերից: Ինչո՞ւ չեն արտաքսում և Միփիթարեան հայրերը.—չը գիտենք:

Յիսուն տարի առաջ հայոց պատմութիւն գրողի գործը շատ հեշտ էր: Եթէ մեր բազմաթիւ մատենագիրներին դիմելու ու նրանցից նիւթեր քաղելու յօժարութիւնը չը կար, բաւական էր և Զամշեանը: Կարելի է հաստատ ասել, որ մեր հեղինակները միմիայն Զամշեանը զանազան ձեռվ և գիրքով կրծատելու գործով էին զբաղուած: Միամիտ ժամանակներ էին. ինչ հազրդուած էր անցեալից, նա ընդունւում էր իբրև սուրբ ճշշմարտութիւն և գրոշմեում էր դասագրքի մէջ: Պատմութիւնը հասկացւում էր այնպէս, ինչպէս հասկացել էր Զամշեանը—դէպքերի, թագաւորների, կաթողիկոսների յիշատակութիւն, պատերազմների, կոտորածների նկարագրութիւն:

Իսկ այժմ Գիտնական քննադատութիւնը տակն ու վրայ է արել շատ և շատ բան. այն, ինչ որ յիսուն տարի առաջ անժխտելի պատմական իրողութիւն էր ընդունւուած, այժմ միայն ժպիտ է պատճառում: Երևան հանուեց և ջնջուեց առասպեկների մի մեծ կոյտ, պատմական ճշմարտութիւն գտնելու համար խորտակուեցան շատ կուռքեր, անխնայ տրորուեցան սուրբ աւանդութիւններից շատերը: Այսքանը հին ժամանակների մասին: Գալով մեր պատմութեան այն շրջաններին, որոնք ունեն փոքր ի շատ կանոնաւոր տարեգրութիւններ, զրաւոր յիշատակարաններ, զրանց վերաբերմամբ էլ գոյութիւն ունեն ուրիշ տեսակ պահանջներ: Պատմութիւնը, ժամանակակից հասկացողութեամբ, թագաւորների, իշխանների, հոգևորականների պատմութիւն չէ, այլ ժողովրդի պատմութիւն: Այս տեսակ պատմութիւն մենք չունենք ոչ միայն գլուխութիւնների համար, ուր նա աւելի քան անհրաժեշտ է, այլ և դպրոցից դուրս, հասարակութեան համար: Նոյն իսկ Պալասանեանի գոված «Հայոց պատմութիւնը», որ լաւագոյնն է համարւում, չէ կարող բաւարարութիւն տալ ժամանակակից պահանջներին:

Այդ պահանջները յայտնի են, ի հարկէ, և Միփիթարեան հայրերին: Թերձիմանեանի այսօրուայ հրատարակիչները, յենուե-

լով դարձեալ այն հանգամանքի վրայ, թէ տալիս են մի դասպիրը երեխաների համար, ասում են որ ազգային հին առասպեկները, որքան էլ գիտութեան կողմից ոչնչացրուած լինեն, պէտք է աւանդել երեխաներին. և եթէ այդ աւանդութիւնները «քննադատութեան անաշառ խարազանի ենթարկելով ազգային մանկուոյն հաղորդուեն», — դա կը լինի մի սրբազնութիւն: Ասենք դա չափազանցութիւն է. «ազգային մանկութիւն» ոչինչ չեն կորցնի, եթէ հայոց պատմութիւնը սկսուի ոչ թէ Բարեկօնի աշտարակաշնութիւնից, այլ խալդերի թագաւորութեան վերջից: Թող հայ երեխաները իմանան մեր հին առասպեկները, — դրա դէմ ոչ ոք չի բողոքի: Բայց թող նրանք մի և նոյն ժամանակ իմանան, որ դրանք առասպեկներ են. թող երեխաները դպրոցից սովորեն իրական ճշմարտութիւնը, ինչ էլ լինի նա: Իսկ երբ դուք ոչ միայն չեք լուսաւորում երեխայի միտքը, համացնելով որ առասպեկները առասպեկներ են, այլ և դնում էք Հայկի պատկերը, անպատճառ, ի հարկէ, յունական տարագով հագնուած մի զինուոր և ոչ թէ, գիցուք, Սոսորեստանի երեք փէշանի հագուստը, որ երեւակայեալ Հայկի պարթև մարմնը պիտի ծածկած լինէր, որովհետեւ նա Ասորեստանի կողմերից էր եկել, մի հագուստ, որ այժմ էլ գոյութիւն ունի մեղանում, հայերի մէջ, — այստեղ թոյլ տուեք որ «քննադատութեան խարազանը» բարձրանայ և ձեզ դէմ:

Զը նայած այդ բոլոր պակասութիւններին, մենք Հ. Թերձիմանեանի գրքոյկի հրատարակութիւնը անօգուտ չենք համարում: Եւ ահա թէ ինչնու:

Սասցինք որ կար մի ժամանակ, երբ մենք շատ էինք սիրում մեր պատմութիւնը: Այժմ այդպէս չէ. այժմ հայը իր անցեալից տեղեկութիւններ իմանալ չէ սիրում: Ինչպէս մենք այժմ աշխատում ենք մայրենի լեզու չունենալ, այնպէս էլ իր բա ազգ չենք ուզում իմանալ, թէ ինչ էինք և ինչ ենք: Մերսիկայի նուռաճման պատմութիւնը մենք շատ լաւ ենք իմանում, կարդում ենք ամենամեծ հետաքրքրութեամբ, իսկ Անիի թագաւորութիւնը... միթէ այդպիսի բան եղել է, հարցնում ենք մենք: Ապացոյց որ Անին այժմ էլ ոչնչանում է, հողի հետ հաւասարւում, մեղանից ոչ մէկի մէջ ափսոսանք չը յարուցանելով:

Այսպիսի ժամանակ մի էժանակին, պատկերազարդ «Հայոց Պատմութիւնը», որքան էլ պակասութիւններ ունենայ, ունի իր նշանակութիւնը: Նոր հրատարակութեան արժանաւորութիւնն այն է, որ նա շատ էժան է, բայց և շատ գեղեցիկ: Բազմաթիւ պատկերներ կան: Պատկերների վերաբերմամբ մենք

պէտք է խնդրենք Մխիթարեաններին, որ դէս գցեն իրանց հին
կլիշէները և նորերը պատրաստեն. չափազանց շատ են նրանք
շահագործուած: Ցանկալի էր նոյնպէս, որ պատկերները պատ-
րաստեին մեր պատմութեան, մեր կեանքին լաւ տեղեակ նկա-
րիչներ: Վենետիկում պատրաստած պատկերների մէջ հայկա-
կան, ասիական շատ քիչ բան կայ. յունական զինուորներ կամ
կաթոլիկ հոգևորականներ—ահա ինչ կերպարանքի մէջ են ե-
րեան հանւում մեր անցեալի գործիչները: Դա մի նշան է թէ
որքան ողորմելի հասկացողութիւն ունենք մենք գեղարուեստի
և պատմական ճշմարտութեան մասին:

Լ.